ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **22-ը նոյեմբերի 2024թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Կարեն Մանասերյանը, Եղիշե Նազարյանը, Մարատ Շահբազյանը, Ծովինար Սարգսյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Գլխավոր բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Օրդոյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը և համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Քրիստինե Պողոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե g.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

3) Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի կողմից 2025 թվականին ներկայացվող սուբվենցիոն ծրագրային հայտերին համաձայնություն տալու մասին:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

6) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

7) Հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

8) Կառուցապատման իրավունքով տրամադրված պայմանագրերի ժամկետը երկարաձգելու մասին:

9) Համայնքային սեփականություն հանդիսացող, վարձակալությամբ տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողերից ենթավարձակալության տրամադրելու համար համաձայնություն տալու մասին:

10) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի,
2) Եղեգնաձոր բնակավայրի բնակիչ Մելանյա Հովհաննիսյանին՝ 30 000 ՀՀ դրամ,
3) Գետափ բնակավայրի բնակիչ Զարիկ Սմբատյանին՝ 20 000 ՀՀ դրամ,
4) Գլաձոր բնակավայրի բնակիչ Վալենտինա Ասրյանին՝ 25 000 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին.

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՌ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների, քննարկելով քաղաքացի Իրինա Դավթյանի դիմումը և Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանի կողմից ներկայացված առաջարկը՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի մշակույթի տան սենյակներից մեկն անհատույց օգտագործման իրավունքով, 2 (երկու) տարի ժամկետով, տրամադրել քաղաքացի Իրինա Դավթյանին՝ Վերնաշեն բնակավայրի դպրոցահասակ երեխաների մասնակցությամբ, անհատույց, խմբակներ և միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը և այն հանգամանքը, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2025 թվականին Հայաստանի Հանրապետության բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ (սուբվենցիա)՝ **ավագանին որոշեց**.

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի կողմից 2025 թվականին ներկայացվող, համայնքի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերին.

1) «ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր համայնքի նոր քաղաքային գերեզմանոցի կառուցում».

2) «Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում».

3) «Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատատում».

4) «ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 և թիվ 5 մանկապարտեզների բակերի բարեկարգում».

5) «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի ոռոգման ցանցի վերակառուցում»:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ կազմել և Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրերի ֆինանսավորման հայտերի փաթեթները:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով ներդրում կատարելու համար՝ համայնքի 2025 թվականի բյուջեում նախատեսել բավարար ֆինանսական միջոցներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 11-ի N 1730-Ն որոշումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.02961 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0063-0007) հողը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 3-րդ կետը և քաղաքացի Մաթևոս Հակոբյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Մաթևոս Արկադիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 0.05 հա խոտհարք հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26062024-10-0015, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0016) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն հիմնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Լսեցին.

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի և Եղեգնաձորի համայնքապետարանի միջև 2015 թվականի մայիսի 21-ին և օգոստոսի 17-ին կնքված հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի 8.1-րդ կետերը, «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը և այն հանգամանքը, որ կազմակերպության կողմից նախատեսվում է պայմանագրերով սահմանված տարածքներում իրականացնել ներդրումային և արդիականացման ծրագրեր՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի և Եղեգնաձորի համայնքապետարանի միջև 2015 թվականի մայիսի 21-ին և օգոստոսի 17-ին կնքված հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի ժամկետները 5 (հինգ) տարի ժամկետով (մինչև 2030 թվականը) երկարաձգելու համար՝ տարեկան վարձավճար սահմանելով 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր պայմանագրի համար:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերի ժամկետների երկարաձգման համաձայնագրեր:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված համաձայնագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը թողնել «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ

մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածով՝ **ավագանին որոշեց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող, վարձակալությամբ տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողերից ենթավարձակալության տրմադրելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման առաջին կետում նշված հողերի ենթավարձակալության տրամադրման ժամկետի ավարտը սահմանել վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտը՝ 2044 թվականի նոյեմբերի 4-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ը, ժամը՝ 18:30-ը, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____